ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզում գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ

ՄԱՐԶԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ.

Հ/Հ	Հողի նպատակային նշանակությունը	Հա
1	Գյուղատնտեսական	218210.3
2	Բնակավայրի	17354.3
3	Արդյունաբերական և ընդերքօգտագործման և այլ արտադրական	2439
4	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքներ	701
5	Հատուկ պահպանվող	2426.9
6	Հատուկ նշանակության	21411.5
7	Անտառային	10874.2
8	Ջրային	2214.8
Ընդամենը		275632

Մարզում ձևավորվել և գործում են 28700 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ, որոնք ունեն հետևյալ կառուցվածքը՝

փոքր տնտեսություններ - 2123

1-5 հա պտղատու այգի կամ խաղող կամ 5-10 հա վարելահող կամ 0.1-0.5 հա ջերմոց կամ 20-30 գլուխ խ.ե.կ. կամ 50-100 գլուխ մ.ե.կ.

միջին տնտեսություններ - 291

5-10 հա պտղատու այգի կամ խաղող կամ 10-20 հա վարելահող կամ 0.5-2 հա ջերմոց կամ 30-60 գլուխ խ.ե.կ. կամ 100-150 գլուխ մ.ե.կ.

խոշոր տնտեսություններ – 120

10 հա-ից ավել պտղատու այգի կամ խաղող կամ 20 հա-ից ավել վարելահող կամ 2 հա-ից ավել ջերմոց կամ 60-ից ավել գլուխ խ.ե.կ. կամ 150-ից ավել գլուխ մ.ե.կ.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		
		2016թ.	2017թ.	2017թ. 2016թ-ի նկատմամբ +/-
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	31054	19628.6	- 11425.4
2	Տեխնիկական մշակաբույսեր	40	43	+3
3	Կարտոֆիլ	1850	1386.33	- 463.67
4	Բանջարեղեն	1553.3	982.2	- 571.1
5	Պտուղ-հատապտուղ	6617	6958.7	+ 341.7
6	Խաղող	1699	1252.8	- 446.2

Վերջին տարիներին առաջընթաց է գրանցվել նոր մշակաբույսերի մշակության արմատավորման գործում՝ կտավատ- 10 հա , ոլոռ 2 հա, սիսեռ 15.3 հա, որոնց տնտեսական արդյունավետությունը մոտ 2-3 անգամ գերազանցում է հացահատիկային մշակաբույսերին:

Բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2016-2017թթ. ունի հետևյալ տեսքը

h/h	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Միջին բերք /g/		Համախառն բերք /տ/		Համախառն բերքի աճ/նվազում /+;-/ /տոննա/
		2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.	
1.	Հացահատիկ և հատիկաընդեղեն	31054	19628.6	29.9	12.87	92851	25266.45	- 67584.55
2	Կարտոֆիլ	1850	1386.33	223	209.5	41250	29038	- 12212
3.	Բանջարեղեն	1553.3	982.2	282.5	267.5	43885	26270.5	- 17614.5
4	Պտուղ-հատապտուղ	6617	6958.7	65.2	98.4	43153	68447.9	+ 25294.9
5	Խաղող	1699	1252.8	28.2	63.8	4800	7999.4	+ 3199.4

Բուսաբուծական արտադրանքի նվազման պատճառ է հանդիսացել 2016թ. սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի դադարեցումը, իսկ կարտոֆիլի արտադրության նվազումը կապված է նախորդ տարվա բերքի իրացման ընթացքում ծագած բարդությունների հետ:

<u>Բուսաբուծական մթերքների համախառն արտադրանք.</u>

1. Հացահատիկ – 25266.45 տ * 110000 դրամ = 2. 78 մլրդ դրամ
2. Կարտոֆիլ –29038տ * 160000 դրամ = 4.646 մլրդ դրամ
3. Բանջարեղեն –26270.5 տ * 115000 դրամ = 3.02 մլրդ դրամ
4. Պտուղ –68447.9 տ * 200000 դրամ = 13.69 մլրդ դրամ
5. Խաղող- 7999.4 տ * 130000 դրամ = 1.04 մլրդ դրամ

Ընդամենը – 25.176 մլրդ դրամ /2016թ. 31.111 մլրդ դրամ, նվազում ՝ 5.935 մլրդ դրամ /

*<<ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական ու կալիումական պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում 2016-*2017թթ. *մարզին հատկացվել է.*

	2016թ.	2017թ.
Ազոտական պարարտանյութ /տ/	5407.15	5976.4

Ֆոսֆորական պարարտանյութ /տ/	63	40.95
Կալիումական պարարտանյութ /տ/	60	24.05
Դիզելային վառելանյութ /լիտր/	990446	623714

2017թ. մարզում իրականացված ծրագրեր

Ներդրումային ծրագրեր. «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում 2011-2017թթ. ընթացքում մարզում հիմնվել են 23 կոոպերատիվներ: Նշված ծրագրով կոոպերատիվներին հատկացվել են 210 միավոր գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ, ինչպես նաև իրականացվել է 64.7 հազ. գծամետր ջրագծերի և 58 խմոցների կառուցում, որի շնորհիվ ջրարբիացվել է 29500 հա արոտավայր:

2017թ. ՓՄՁ Արագածոտնի ՋԱԿ-ի կողմից տրամադրվող լիզինգային ծրագրով ձեռք է բերվել 14 միավոր գյուղատնտեսական տեխնիկա:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ

Արագածոտն	Գումարը / ՀՀ դրամ/	%
Անասնապահություն	276.700.000	50
Այգու հիմնում	46.000.000	8
Ջերմոցային տնտեսություն	43.000.000	8
Անասնապահություն,դաշտավարություն	42.000.000	8
Պտղագործություն,այգեգործություն	40.000.000	7
Սառնարանային տնտեսություն	30.000.000	5
Անասնապահություն,այգու հիմնում	11.000.000	2
Դաշտավարություն,գյուղգործիքների ձեռքբերում	11.000.000	2
Անասնապահություն,կաթիլային համակարգի և հակակարկտային ցանցի ձեռքբերում	10.000.000	2
Մեղվաբուծություն,դաշտավարություն	10.000.000	2
Օրգանիկ պարարտանյութերի ձեռքբերում,մրգի վերամշակում	10.000.000	2

Դաշտավարություն	8.000.000	1
Անասնապահություն,ինտենսիվ այգու հիմնում	7.000.000	1
Անասնապահություն, մեղվաբուծություն, այգու հիմնում	5.000.000	1
Անասնապահություն, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում	3.000.000	1
Ընդամենը	552.700.000	100

ՈՒսուցողական ծրագրեր. Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից 2017թ. 2-րդ կիսամյակում անցկացված ծրագրային դասընթացներին հայտարարագրվել են 872 մարդ, դասընթացին մասնակցել՝ 422 մարդ և հավաստագրվել են 407 -ը:

Բանկ դիմած անձանցից վարկ են ստացել 59 մարդ, որից 50 -ը ստացել են մինչև 5 մլն դրամ վարկ, իսկ 9 -ը 5 մլն և ավելի:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» շրջանակներում Արագածոտնի մարզում ընդհանուր տրամադրվել է 4 210 088 215 ՀՀ դրամ վարկ:

Հակակարկտային միջոցառումներ.

2017թ. կարկտահարվել են մոտ 299.552 հա խաղողի և 939.1 հա պտղատու այգիներ,ինչպես նաև 2589 հա հացահատիկի, 43.3 հա բանջարեղենի ցանքատարածքներ: Կարկտահարության պատճառած ընդհանուր վնասը կազմում է մոտ 2.8 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 23 Նոյեմբերի 2017 թ. 1489 – Ն որոշմամբ մարզի կարկտահարված 29 համայնքների 1821 շահառու հողի հարկի / 20120120 ՀՀ դրամ/ և ոռոգման ջրի / 156768400 ՀՀ դրամ/ դիմաց ստացել է փոխհատուցում:

Մարզում 2017թ. ընթացքում տեղադրվել են 11 հակակարկտային կայանքներ՝ Արտենի-4, Կարբի-2, Օհանավան-2, Աշտարակ-2, Սասունիկ-1: Այժմ մարզում գործում է 77 հատ հակակարկտային կայաններ:

Անասնապահություն.

Գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառման արդյունքները ամփոփ տեսքով ներկայացվում են աղյուսակում /2016-2017թթ./.

Գյուղ. կենդանիներ	2016թ.	2017թ.	Աճ/նվազում (+/-)
Խ.ե.կ.	83276	73409	- 9867
որից՝ կովեր	39608	36059	- 3549
Խոզեր	14228	15127	+ 899
Ոչխարներ և այծեր	92250	86104	- 6146
Թռչուններ	343976	394428	+ 50452

Մեղվաընտանիքներ	12042	12802	+ 760

ՀՀ Արագածոտնի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2015-2016թթ. ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	Համախառն արտադրանք	
	2016թ.	2017թ.
Միս /հազ. տ/	17	17.9
Կաթ /հազ. տ/	86	87.1
Ձու /մլն հատ/	63.5	66

Անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտ՝

1. Միս – 17900 տ * 2 մլն դրամ = 35.8 մլրդ դրամ
2. Կաթ –87100 տ * 130000 դրամ = 11.323 մլրդ դրամ
3. Ձու – 66 մլն հատ * 50 դրամ = 3.3 մլրդ դրամ

Ընդամենը –50.423 մլրդ դրամ /2016թ. 48.355 մլրդ դրամ, աճ 2.068 մլրդ դրամ/

- *Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիր.* Պայքարի միջոցառումներն իրականացվում են հիմք ընդունելով բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները: 2017թ. մարզի շուրջ 15200 հա վարելահողերի վրա մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ են իրականացվել:
- Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման ծրագիր. Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2017 թ. ՀՀ Արագածոտնի մարզին է հատկացվել 2623.35 տ ազոտական պարարտանյութ, որի գումարը կազմում է 314.802 մլն ՀՀ դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 52.467 մլն ՀՀ դրամ, 31.2 տ ֆոսֆորական պարարտանյութ, որի գումարը կազմում է 4.368 մլն ՀՀ դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 3.9 մլն ՀՀ դրամ, 28.2 տ կալիումական պարարտանյութ, որի գումարը կազմում է 3.948 մլն ՀՀ դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 2.199 մլն ՀՀ դրամ:
- Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում. Համաձայն մարզի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացված հայտի՝ մարզին են հատկացվել 133.353 տոննա գարնանացան գարու(տրվել է 29 համայնքի,կատարվել է 652.25 հա ցանքս), 3.246 տոննա գարնանացան ցորենի (տրվել է 9 համայնքի,կատարվել է 14.3 հա ցանքս), 1.9386 տոննա առվույտի (տրվել է 23 համայնքի,կատարվել է 75.37 հա ցանքս), 18.4 տոննա կորնգանի (տրվել է 23 համայնքի,կատարվել է 149.1 հա ցանքս), 0.1 տ հնդկացորենի սերմացուներ (տրվել է 1 համայնքի,կատարվել է 1.2 հա ցանքս):

- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր . 2017 թ. մարզի 1797 հողօգտագործողների տրամադրվել են 2.136 մլրդ դրամի վարկեր, որից 669.9 մլն դրամը սուբսիդավորված վարկեր են:

Սպանդանոցային կարողությունների զարգացման ծրագիր Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծական և ոչխարաբուծական տոհմաբուծարանների ստեղծում և բարձրարժեք տոհմային կենդանիների մատակարարում ֆերմերային տնտեսություններին. Մարզի Արագածավան և Աշտարակ համայնքներում գործում են 2 տոհմային տնտեսություններ, որոնք մասնագիտացված են սիմենթալ, շվից և հոլշտեյն ցեղատեսակների բուծմամբ/ 150 գլուխ/ : Տնտեսությունները բուծում են նաև 300 գլուխ << արագած>> ցեղատեսակի ոչխար: 2017թ. արհեստական եղանակով սերմնավորվել է 400 գլուխ խ.ե.կ. :

Մարզի Վարդենուտ համայնքում գործում է ժամանակակից սպանդանոց,որտեղ հնարավոր է 1 հերթափոխում / 8 ժամ / մորթել 150 գլուխ մ.ե.կ. ,100 գլուխ խոզ և 50 գլուխ խ.ե.կ. կամ 10500 տոննա/տարի կենդանի քաշով: Անասնաբուծության զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակներում անհրաժեշտություն կա կառուցելու ևս 2 սպանդանոց, 2018թ. նախատեսվում է կառուցել 1 սպանդանոց:

Գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողերի ընդլայնում՝ հողերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է սկսել չօգտագործվող հողերի հետ վերադարձի գործընթացը՝ համաձայն գործող կարգի (ըստ անհրաժեշտության կատարել նաև օրենսդրական փոփոխություններ), և նպատակային օգտագործման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարների վրա:

Սառնարանային տնտեսությունների հիմնում. Ինտենսիվ այգիների ավելացմանը զուգընթաց մարզում ավելանում է նաև սառնարանային տնտեսությունների թիվը: 2017թ. մարզում գործում են 18 սառնարանային տնտեսություններ՝ մոտ 9000 տ պահպանման կարողությամբ:

Բնապահպանության բնագավառ
2017թ. ընթացքում իրականացված ծրագրեր

ՀՀ Արագածոտնի մարզում առկա են շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման մեծ խնդիրներ: Դրանք են՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, մարգագետինների բարելավումը և արդյունավետ օգտագործումը:

Մարզի հանքավայրերը շահագործվում են 34 կազմակերպությունների կողմից, որոնց օրինականության վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակ տեղեկատվություն է տրամադրվում համապատասխան գերատեսչություններին: Անտառազանգվածը կազմում է 11110 հա, որից մաքուր անտառ 5215 հա: Անցած տարիների ընթացքում անտառատնկման մասսայական աշխատանքներ չեն կատարվել և չեն վերացվել նախկին տարիների ծառահատումների միջոցով հասցված վնասները: Ծառատնկումները հիմնականում կատարվում են հասարակական նախաձեռնությամբ և միջազգային կազմակերպությունների նվիրատվությամբ, որը չի կարող հիմնովին լուծել հիմնախնդիրը:

01.12.2017թ. դրությամբ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Լուսագյուղ, Արայի, Քուչակ և Հնաբերդ համայքներում գերմանական GIZ կազմակերպության կողմից էռոզիացված հողերում կատարվել են անտառհիմնման աշխատանքներ: Արայի համայնքում հատկացվել է 53 հա հողատարածք, որից արդեն տնկվել և ցանկապատվել է 18 հեկտարը, իսկ 35 հեկտարը միայն ցանկապատված է: Ծրագիրն ունի շարունակական բնույթ:

Լուսագյուղ համայնքում ցանկապատվել է 4 հա հողատարածք, տնկումները ավարտված են: Տնկարանը զբաղեցնում է 2200 քմ տարածք, որտեղ առկա է մոտ 6000 տնկի:

Հնաբերդ համայնքում ցանկապատվել է 20 հա հողատարածք, որից 2 հեկտարը գտնվում է հուշարձանի մոտ, իսկ մնացած 18 հեկտարը լճի մոտ, որից 5 հեկտարը տնկված է:

Քուչակ համայնքում հատկացվել է 47 հա հողատարածք, որից <<բասեյիններ>> կոչվող տարածքում ցանկապատվել և տնկվել է 20 հեկտարը, լճի մոտի տարածքի 27 հեկտարից 10 հեկտարը տնկված է, ընթացքի մեջ է 17 հեկտարի տնկման աշխատանքները: